

ՏԱՃԱՐ

ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՇԱՐԱԹԱԹԵՐԹ
ԿՐՕՆԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ

ՏՆՕՐԷՆ - ԽՄԲԱԳԻՐ
ԶԱՐԲԱՅԻ ԳԱՀԱՆԱՑ ԿԵՕՁԻՒՐԵԱՆ

Բ. ՏԱՐԻ

ՇԱՐԱԹ, 3 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1911

ԹԻԻ 47

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՃԱՄԻՈՒ ԵՈՒՇՔԵՐԷՍ.—Հայ գեղարուեստը.—Խաչքարերը

Աշխարհի պատրաստութիւնը՝ Մեսիայի գալստեան համար

Հայ Բողոքական

«ՏԱՃԱՐ»ը յառաջիկայ շրջանին մէջ

Հայ Մամուլը (Քերթուած)

Հերքումը մը

Մտածումներ

Ա.Զ.Գ. ԿՅԱՆԻՔԸ.—Կաթող. ընտրութեան շուրջը.—Գաւառի

անապահովութիւնը.—Պատր. ընտրութիւն և շաքիւռան

ուրիշ յարեւոր լուրեր

ԲԱԲԳԷՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ

ԳՐ. Ա. ՍԱՐԱՅԵԱՆ

ՎԱՂԱՐՇԱԿ ՔԶ. ՃԵՐՐԱԶԵԱՆ

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

ՍԱՀԱԿ-ՄԵՍՐՈՊ

ՊՕՂՈՍ Վ. ԳԱՅՔԱՆԵԱՆ

ԽԱԶԻՍԱՐ

«ՏԱՃԱՐ»ի թիւ՝ վարչական և թիւ՝ խմբագրական գործերուն համար պէտք է
դիմել առ Զարմայր Քանհանայ Կեօղիւրեան, Կ. Պոլիս, Պեթիկթաշ, Հայոց Եկեղեցի

بشيكطاش ارمني كليسا سنده «داجار» غزتمى مديرى پاپاس زارماير افندي

Rev. Père Zarmaïr Guézurian, Rédacteur de la Revue «DADJAR»
Constantinople, Béchiktache, Eglise Arménienne.

«ՏԱՃԱՐ» Ի

ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Հինգ թաժանորդ զանազան իրաւունք ունի մէկ թերթ ձրի ստանալու

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԵՐԸ ԿԱՆԹԻԿ ԵՆ

ԽԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ Կ'ԸՆԴՈՒՆՈՒՆ ԴԻԻՐԱՄԱՏՁԵԼԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՎ


ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պոլսոյ եւ գաւառաց՝ տարեկան	40 դրու
Արսասահմանի համար »	10 ֆրանկ
Ռուսիա »	4 ռուբլի
Ամերիկա »	2 օլար
Ձեռքէ կը ծախուի պրակը	40 փարա

ԳՐԻԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՔ «ՏԱՃԱՐ» ԿՐԾՆԱԹԵՐԹԻ

ԱՆԴՐԻԱՆՈՒՊՈԼԻՍ. — Առաջն. Փոխա-
նորդ Տ. Արսէն Բհնյ. Դերձակեան
ԱՂԵՔՍԱՆԴՐԻՍ. — Տ. Ռուբէն Բհնյ. Գա-
րիկեան
ԱՄԵՐԻԿԱ. — Առաջն. Փոխանորդ Տ. Պո-
ղոս Վրդ. Գաֆիթեանեան
ԱՅՆԹԱՊ. — Տ. Գարեգին Բհնյ. Պողար-
եան
ԱՏԱԲԱՋԱՐ. — Տ. Սերոբէ Բհնյ. Պուր-
մայեան
ԱՏԱՆԱ. — Տ. Կարապետ քհնյ. Երե-
ւանեան
ԱՅԻՐՈՆ ԳԱՐԱՀԻՍԱՐ. — Տ. Խաչատուր
Ա. Բհնյ. Տօնեղեան
ԲԱՐԵՐԴ. — Մ. Սանտեան էֆ.
ԲԱՂԷՇ. — Առաջնորդ Տ. Սուրէն Ծ. Վ.
Գալմեան
ԳԱՂԱՏԻԱ. — Առաջնորդ Տ. Բարգէն Եպս.
Կիւլէսէրեան
ԳԱՀԻՐԷ. — Տ. Յարութիւն Բհնյ. Սար-
գիսեան
ԵՕՁՂԱՏ. — Առաջնորդ Տ. Խորէն Եպիսկ.
Դիմաքսեան
ԵՐՁՆԿԱ. — Առաջն. Փոխանորդ Տ. Եղիշէ
Բհնյ. Արամեան
ՁՄԻԻՌԻՆԱ. — Տ. Յարութիւն Բհնյ. Տ.
Սարգսեան
ԷՍԿԻ ՇԷՀԻՐ. — Տ. Գալուստ Բհնյ. Տ.
Գալուստեան
ԿԱՐԻՆ. — Առաջն. Փոխանորդ Տ. Ներսէս
Ա. Բհնյ. Վաճանեան

ԿԻՐԱՍՈՆ. — Տ. Սրապիւն Բհնյ. Ալլաեան
ՀԱԼԷՊ. — Տ. Մկրտիչ Բհնյ. Մուրաթեան
ՄԱՐԱՇ. — Տ. Հմայեակ Բհնյ. Վարժա-
պետեան
ՄԱՐԶՈՒԱՆ. — Յակոբ էֆ. Սրապեան
ՆԻԿՈՄԻԴԻԱ. — Տ. Ոսկի Բհնյ. Պիպիեան
Շ. ԴԱՐԱՀԻՍԱՐ. — Տ. Նաթան Բհնյ.
Տառեան
ՌԻՇԱՔ. — Տ. Յարութիւն Բհնյ. Աստարդ-
եան
ՊՐՈՒՍԱ. — Առաջն. Տեղապահ Տ. Վար-
դան Ծ. Վ. Գասպարեան
ՊԱՆՏՐԱՄԱՊԱԼԻՔԷՍԻՐ. — Տ. Կուսմի Բհ.
Ֆիրգալեան
ՊԱՂՏԱՏ. — Առաջնորդ Տ. Մովսէս Ս.
Եպիսկ. Կէօմրիւքեան
ՌՈՒՍՃՈՒՔ. — Տ. Մկրտիչ Բհնյ. Մըրժ-
նիկեան
ՌՈՏՈՍԹՕ. — Առաջնորդ Տ. Գէորդ Ծ.
Վրդ. Աղանեան
ՍԵՐԱՍՏԻԱ. — Առաջն. Փոխանորդ Տ.
Թէոփիլէ Բհնյ. Օտապաշեան
ՍԵԼԱՆԻԿ. — Հոգեւոր Տեսուչ Տ. Կարա-
պետ Բհնյ. Թուխմանեան
ՏԱՐՏԱՆԷԼ. — Տ. Դիմեակոս Բհնյ. Տրեղ-
եան
ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏ. — Դաւիթ էֆ. Մովսէս-
եան
ՏՐԱՊԶՈՆ. — Առաջնորդ Տ. Սերոբէ Վ.
Սամուէլեան
ՓԱՐԻՁ. — Հոգեւոր Տեսուչ Տ. Վառժա-
պետ Բհնյ. Բիպարեան
ՔՂԻ. — Առաջնորդ Տ. Պապ Վրդ.
ՖԻԷՋՆՕ. — Յակոբ էֆ. Նշկեան



ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԿՐՕՆԱԿԱՆ. ԱԶԳԱՅԻՆ. ԳԻՒԿԱՆ

Բ. ՏԱՐԻ

ՇԱԲԱԹ, 3 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1911

ԹԻԻ 47

ՀԱՄԱՐՈՒ ԵՈՒՇԻՆԵՐԷՍ

ՀԱՅ ԳԵՂԱՐՈՒԵՍՏԸ

ԽԱՉԻՐԱՆԵՐԸ

Բնաշխարհի հոյակապ աւերակներուն քով և հայ գեղարուեստի նշխարներուն մէջ մասնաւորապէս ներգործեցին վրաս Խաչաւերը: Թուրքիոյ Հայերը, բաց ի ա- նոնցմէ որ տեղեակ են հայկական հնու- թիւներու և սովորութիւններու, առ հա- սարակ գաղափար չունին թէ ի՞նչ է Խաչ- քար: Ես իսկ, Մշոյ և Բաղէշի չքանակ- ներուն մէջ ծանօթացած ըլլալով հանգերծ Խաչաւերու, չէի անդրադարձած ատոնց կրօնական և գեղարուեստական խորունկ նշանակութեան վրայ: Էջմիածնի ճամբոր- դութեանս առթիւ, նորագոյն հանդիպում- ներս, հայկական հին աւերակներու, հայ գեղարուեստի հին կերտուածքներու միա- ցորդներուն, թագաւորական և իշխանա- կան չիրմներուն, արթնցուցին զիս, և ես մտածաւոր ու նոր հետաքրքրութեամբ մը զխոնցի, քննեցի Խաչաւերը:

Հին եկեղեցիներու պատերու ներքին և արտաքին երևաններուն վրայ գեղեղունա- մալ և ալ մեծութեամբ և ձևերով Խաչ- քարեր սովին հայ ստանաւ պէտք է ըլլայ:

Ատոնք երբեմն շատ պարզ արձանագրու- թիւն մը ունին, անուն մը և թուական մը, երբեմն սուրբ խաչս թառեխօս, այ- սինչին, առանց թուականի կամ թուակա- նով, երբեմն մէկէ աւելի անուններու նուիրուած յիշատակագրութիւն մը: Ատոնք առ հասարակ ննջեցեալներու յիշատակին՝ եկեղեցւոյ մէջ ապահովապէս դրուած ար- ձանագրութիւններ են կամ յիշատակա- րաններ, երբեմն ալ պարզապէս բարեպաշ- տական զգոցումներ արտայայտող նշան- ներ: Բայց ամէնքն ալ միշտ հաւատաց- եալներու ուշադրութեան առարկայ, ա- ղօթքի, բարեխօսութեան, մոմի, խոնկի մշտնջենաւոր կրօնականացումով:

Ատոնք չեն սակայն իմ մասնանիշ ըրած Խաչքարերը, ես կ'ուզեմ մասնանիշ ընել ատոնց կատարելագործուած ձևերը, որոնք դրուած են գերեզմաններու վրայ, իբր տապանաքար կամ իբր մահարձան:

Գերեզմաններու ամէնէն նախնական ձևերը ամէնուն ծանօթ պարզ հողակոյտ- ներ են. և ամէն ազգ ու ցեղ իր կրօնա- կան և ընկերականական հոսկցողութեան և իրենց մէջ տիրող արուեստներու զարգաց- ման համեմատ աշխատած են պահել պահ- պանել իրենց ննջեցեալներուն նշխարքը կամ աճիւնները: Եգիպտացիներու հաւատ- քը հոգեփոխութեան վրայ, անոնց հնարել

տուած է հրաշալի միջոցը դիմելները անփութապահելու, և հազարաւոր տարիներու մոլորաները դեռ հրաշալի են մինչև հիմայ իրենց նկարուն անեղծ գազաղներով: Հռոմի գեանադամրանները նշանաւոր են մեռելներու պահպանութեանը համար: Այլ և այլ սեռակ միակտուր քարէ փորուած կամ հողէ թրծուած սափոթաժնիր, — որոնց հետաքրքրական և թանկագին հաւաքածանունի կ. Պոլսի կայս. հնութեանց թանգարանը, — կ'արտայայտեն հին արեւելեան ազգերու (Քեսապիք, Փիւնիկեցիք, Ասորիք, Ասորեստանցիք, և ըն) փառքի և գէնքի տիրապետութիւնը:

Կ'արժէր Հայոց գերեզմաններուն շինուածական գրութիւնն ալ մասնաւոր ուսումնասիրութեան առարկայ ընել պատմական շրջաններու մէջ՝ ցոյց տալու համար այն ձեւափոխութիւնները, որոնց ենթարկուած է: Արդէն շատ մը հայերէն բառեր, զոր որինակ գերեզման, դամբան (գամբարան), դիր (գիրք), Տապան, շիրիմ, արձան (մահարձան), հորկաւ փաղանուսութենէ (synonimie) ուելի նշանակութիւններ ունին, որ պէտքիստութեան գաղափարը կուտան: Իսկ Հայոց հին և նոր գերեզմանները քննելով կը տեսնենք, որ իրապէս ուշագրաւ պէտքիստութիւն մը կը ներկայացնեն ատենց վրայ գրուած քարերը: Օրինակի համար, Հայաստանի մէջ նշանաւոր գերեզմաններ, Յովհ. Մկրտչին և Աթանոսինէ եպոսին գերեզմանները՝ Մշոյ Սուրբ Կաթապետին մէջ, Ս. Սահակ հայրապետինը՝ Աշտիշատի (հիմայ Տեքիֆ գիւղի) մասրան մէջ, օրօրոցաձեւ ըսուած պարզ քարերով ծածկուած են: Սշոտ Ողորմածի գերեզմանը՝ Հռոմի վանքին (==Ղօշափանքին) մօտ, վարը Ախուրեանի եղերքը, Ս. Գէորգի հովանւոյն տակ, Գագիկի գերեզմանը, Սանահին վանքին մէջ՝ Վահրամ Պահլաւունի կողակից Տիկին Սոփիայի գերեզմանը (Մարմաշէնի մէջ) օրօրոցաձեւ քարեր ունին: Մաշթոց կթղի գերեզմանը որ նոր երեւան եկած է Բրօֆ. Ն. Մաւի պեղումներուն հետեւանքով, Գառնի, Տրդատի սարաոյթին մօտ, շատ պարզ քար մը ունի

1.90 × 0.56 մեղր մեծութեամբ, քառանկիւն ուղղանկիւն մը, որուն վրայ փորագրուած է «ՅԽԶ(*)» քվ: ի Քա. փոխց Տր. Մշոյ: Բաբերդի Վարդանան գիւղի գերեզմաններուն մէջ տեսած եմ խոյաձեւ(**) (=ոչխարաձեւ) քարեր: Էջմիածնի միաբանական գերեզմանները առհասարակ վերին երեսը բոլորչի օրօրոցաձեւ քարեր են(***) , որոնց մէջտեղ ուշագրաւ է եփրեմ Կթղի գերեզմանը արեւաբարձ ցածուկ գմբէթի մը տակ, որ քառանկիւն ուղղանկիւն դեղնորակ մարմարէ տապանաքար մը ունի, վրան տապանագրով: Այսպէս քառանկիւն ուղղանկիւն տապանաքարեր ունին կաթողիկոսական միւս գերեզմաններն ալ, որոնք շարուած են Էջմիածնի Մայր-Տաճարին արեւմտեան դրան առջեւ, զանգակատան երկու կողմերը: Օշականի մէջ շատ եզակի էր Վահան Ամատունիի գերեզմանը, ոչ թէ Ս. Մեսրոպի եկեղեցւոյն բակը նոր անկուած մահարձանը՝ Ամատունիի անունով, այլ այն կոթողը, որ փողոցին միւս կողմը, տան մը մարագին մէջ մնացած է, և որուն ծայրը, տանիքէն գուրս ցցուած, արագիւններ իրենց կրկուտակերտ բոյնը հիւսած են: Անշուշտ կարելի է վրիպեցնել ուշագրութենէ այլաձեւ ու այլազան տապանաքարերու հետ՝ ատենց վրայ փորագրուած զարդերը, որոնք սկզբունքով միշտ խորհրդաւոր են և կը մարմնացնեն ննջեցեալներու հոգեխօսական-ընկերաբանական վիճակները: Այս կողմէն շատ ծանօթ են արհեստաւորներու գործիքներուն քանդակուածները, եկեղեցականներուն սաղաւարտը, գաւազանը, գիրքը, խաչը և այլն, ամբողջովին կամ մասամբ:

(*) ՅԽԶ=(346+551=)897:

(**) Որմէ խոյակապ կամ հոյակապ:

(***) Նոյն խորվիրապի մօտ գերեզմանները, որոնք եռվան գիւղացիներուն են, ետքը Աղեքսանդրապոլի գերեզմանները լեցուն են այս ձեւ քարերով, և նորութիւն մը ինձ համար. ներկուած են շատեր այդ քարերէն շաղանակագոյն կամ մութ կարմրագոյն վերջերս կեսաբոյ ուղեւորութեան միջոցին գիտեցի որ այս ձեւով գերեզմանաքարեր կեսաբոյ ալ սովորական են:

Տապանաքարերու այս խոշոր սյաղա-
նութեան մէջ խաչքարերը կը բռնեն բա-
ցառիկ գիրք մը, իրենց կրօնական նշանա-
կութեամբ և իրենց գեղարուեստական
կերտուածքով: Եւ ստուգիւ խաչքարերու
մասին շատ լաւ գաղափար մը կազմելու
համար պէտք է ատոնց գեղակերանները
տեսնել և քննել: Ես առաջին անգամ
Մշոյ Ս. Առաքելոց վանքին խաչքարերը
տեսայ, վանքի արեւելեան պատին արտա-
քին կողմը: Թարգմանչաց խաչքարեր ևն
ատոնք, և զիս գրաւեցին, ոչ թէ իրենց
գեղարուեստով, այլ ինձ համար իրենց
ունեցած նորութեամբ և մանաւանդ իրենց
այն հանգամանքով, որ անհամեմատելի
կերպով պատկերի է և նուիրական. այ-
սինքն ատոնք Թարգմանչաց մահարձան-
ներ էին սիրուած աւանդութեամբ մը, ա-
ւանդութիւն մը այնքան հաստատուն, որ
Առաքելոց վանքը՝ Թարգմանչաց վանք ալ
կոչուած է: Թարգմանչաց խաչքարերը
կոչու պատուանդաններու վրայ տնկուած
են և գեղարուեստորէն ալ գրաւիչ չեն:
Բայց Բաղէշի մօտ, Պոս գիւղի Ս. Գրի-
գոր վանքին շուրջը գտնուած խաչքարերը
գրաւեցին զիս իրենց նրբութեամբ: Ո՛ր-
չափ սուեւուած բեւեւուած մնացի ատոնց
մեծութեան, քանդակներու սիրունու-
թեան, խիստ կարճ ու կտրուկ յիշատա-
կագրութեանց: Ասոնք ալ սակայն կատա-
րելագործուած ձեւերը չեն եղել նայելով
ատոնց, որոնք արձանացած են Սանահին,
Հաղբաս, և կը մնան անվթար: Անի մէջ
ալ, նոր պեղումներու ատեն. երեւան ե-
կած են խաչքարեր(*), գեղեցիկ քանդակ-
ներով:

Սաչը իր կրօնական նշանակութեամբ
Հայուն համար է յաղթութեան զէնքը և
փրկութեան ապաւենը: Շարականի մէջ
Սաչի նուիրուած հատուածներն ալ, որոնք
է. դարէն Զորափորեցի Սահակ Կթղ. ի կը

(*) Ասոնցմէ մէկը, 1892ին Ս. Գրիգոր Եկեղե-
ցիի պեղումէն ելած, գործ թ. դարու, որ ըստ
Բրոֆ. Ն. Մառի «Անուշ հնագոյն թուակիր խաչ-
քարն է» (Տես № 1. ԱՆԻՈՅ ՇԱՐԲ, համառօտ
ցուցակ Անուշ հնադարանի. կողմեց Ն. Մառ,
տպ. Ս. Պետերբուրգ, 1906, էջ 11—12, Տախ-
տակ VI):

վերագրուին, իրենց իմաստներով և քեր-
թուածով կը տարբերին ուրիշ շարական-
ներէ: Հայաստանի մէջ, օտար ազգերու
ամէն տեսակ բարքարոսութեան և խժոժու-
թեանց նշաւակ այդ քրիստոնեայ երկրին
մէջ, խաչը իբրեւ պահապան և հովանի, իր
խորհրդաւորած խաչեպին կենդանութեամբ
այնքան աղղած ներգործած է Հայ-քրիս-
տոնեաներուն վրայ, որ անոնք Սաչը միայն
ուզած են տեսնել ամէն կողմ, նոյն խակ
հաւատացեալներու գերեզմաններուն վրայ:
Այդ Անքարքաւ Բարեխօսը՝ կարելի է ըսել՝
հայացած է և մեծ կարեւորութեամբ իշ-
խած է Հայոց կրօնական արտայայտու-
թիւններուն մէջ: Ես կը թելադրուիմ այս-
պէս մեկնել խաչին ըմբռնումը Հայոց մէջ,
և ատոր այդքան ընդարձակ տիրուպետու-
թիւնն ալ կ'ուզեմ որակել խաչապետու-
թիւն քացատրութեամբ:

Հայ գերեզմաններու վրայ տեսնել գե-
ղակերտ խաչքարեր, ստուգիւ յուզիչ է:
Տապանաքարի ուրիշ ու ե է ձեւը, որքան
ալ թանկագին, չընեն խաչքարի ազդեցու-
թիւնը, որ խորհուրդ ալ ունի: Համչէնցի
Հայոց բարբառին մէջ «խաչ» կը նշանակէ
նաեւ «եկեղեցի»: Եւ Համչէնցիներու խաչերը
գիւղերէն դուրս են և չընկալուած
գիւղին գերեզմաններով, իբր թէ եկեղե-
ցին մեռելներու համար չ'իւնուած ըլլար:
Հաչը կը սիրէ իր վերջին հանգիստը գտնել
«ընդ հովանեաւ» Սուրբ Եկեղեցւոյ. նոյն-
պէս սիրած է եկեղեցւոյն հետ նոյնացող
խաչը կրել իր գերեզմանին վրայ, իբր մա-
հարձան, իբր ապաւեն սնուարտելի, որ
պիտի պահէ պահպանէ իր ոսկերստին և
պիտի բարեխօսէ իրեն համար:

Սաչքարերու կատարելագործեալ ձեւե-
րէն պիտի նկարագրեմ քանի մը հատը:

Իմ տեսածներուն մէջ ասոնց ամէնէն
գեղակերան է անշուշտ Տուտէորդի Գրի-
գոր վարդապետինը, Սանահին նշանաւոր
առաջնորդին, որ համբաւաւոր եղաւ իր
պահպանողական պայքարով ազատամիտ
Համբրոնացի Ներսէսին դէմ: Տուտէորդին
իր ողջութեան՝ պատրաստել տուած է իր
դամբարանը, անշուշտ մեծ ծախքով և մա-
նաւանդ հիմնալի ամրութեամբ մը, որ

դարերէ ի վեր կանգուն կը մնայ, և կը մարմնացնէ իր ամբարտաւանութիւնը, Սանահնի վանքին արեւելեան կողմը, վանքէն քարքնէց մը հեռաւորութեամբ, հին Արդութեանց լքուած, աղբիւս դարձած, դամբարաններուն հիւսիսային կողքին: Այս խաչքարին պատուանդանը պարզ քիււրով (corniche) խոշոր քառակուսի մըն է, կտոր կտոր քարերէ շինուած, բայց ճիւղաւորի պէս ամուր, չորս կողմերը կամարակալ կրկնաօրին խորաններ քանդակուած: Այս պատուանդանը բուն դամբանը պիտի ըլլայ անշուշտ, որուն վրայ երկրորդ աւելի փոքր պատուանդան մը կայ, և ասոր վրայ կանգնած է գեղաքանդակ խաչքարը(*): Խաչքարին մէկ երեսը խաչ, գրեթէ քարին մեծութեամբ, իսկ միւս երեսը ամբողջ արձանագրութիւն Մեսրոպեան տաւերով, որոնք սովորական բացատրութեամբ խոշոր երկաթագիրներ են:

Հաղբատի խաչքարերն ալ ուշագրաւ են, որոնք բուն եկեղեցւոյն կից քովնաւի յաւելուածական մատուռներու մէջ գրուած են խոշոր խոշոր: Բայց Հաղբատի վանքի բակին մէջ, հիւսիսային արեւմտեան անկիւնը, իշխոնական երեք դամբարաններ կան քով քովի: Ասոնք իրարու կից, միախորան մատուիկներ, աւելի ճիշտը խցիկներ են, որոնց տանիքին վրայ բարձրացած են խաչքարերը: Մատուիկը կամ խցիկը միանգամայն բուն գերեզմանն է անշուշտ, ուր պատարագ կը մատուցուի, իսկ Խաչքարը վրան(**):

Խաչքարեր քանդակուած են նաեւ շատ մը վանքերու ժամատուներու մէջ, բուն

(*) Խաչքարերը առ հասարակ մէկուկէս մեղրէն բարձր, 50—90 սանթիմետր լայն, 15—20 սանթիմետր հաստութեամբ քարէ տախտակներ են. վարի կողմէն կոթի պէս ծոյր մը, բաւական երկար, պատուանդանին վրայ բացուած ծակին մէջ գետեղուելու և հաստատուելու համար— Դժբախտաբար ասոնք և միջոց չունեցող երկար բարակ չափերու Տուտէորդէոյն խաչքարը իր ամբողջութեան մէջ:

(**) ձիջդ ասոր հակառակն են Հռոմիոսի վանքին գերեզմանները: Հոն ամբողջ նկուղ մը կայ, որուն յատուկ գերեզմաններ են, և այդ նկուղին վրայ կան երեք մատուիկներ կամ խցիկներ, ննջեցեւոց պատարագի համար:

եկեղեցւոյն դրան երկու կողմերը: Արդէն ժամատուներն առ հասարակ գերեզմաններ են:

Խաչքարերու քանդակներն իրապէս նուրբ են և խորունկ, համաչափութիւնը սնթերի՝ ամէնէն յետին գիծերու մէջ: Դանդաղները կամ ժանեակներ (dentelle) են կամ մանաւանդ հիւսկէններ (էօրմէ), կանեփի հիւսկէններուն նման՝ այսպէս յօրինուածքով: Դիտուած է որ հիւսկէնի կամ հիւսուածքի քանդակներ արող են Հայ քանդակագործութեան մէջ, և հարուստ պէսպիսութիւն մը ունին թէ՛ որակով և թէ՛ քանակով:

Հիմայ ես կը փափաքէի, որ Հայեր, որոնք մանաւանդ մեծ քաղաքներու մէջ՝ Եւրոպական նոր արուեստով ու ճաշակով գերեզմանաքարեր կամ մահարձաններ շինել կուտան և շատ անգամ մեծ մեծ ծախքեր կ'ընեն, մշակէին խաչքարերու գրութիւնը, հայ գեղարուեստին այդ ճիւղը, որ շատ մեծ յաջողութեամբ մշակուած և զարգացած է նախնեաց մօտ:

Ասով վերջ պիտի արուէր շարք մը այլանդակութիւններու, և արդի քանդակագործութեան առաւելութիւններն ալ միանալով հայրենի գեղարուեստի մեթոտին վրայ, պիտի ունենայինք վերածնութիւն մը:

Ամէնէն առաջ հայ ճարտարապետներուն և հայ քանդակագործներուն պարաքն է հետաքրքրուիլ խաչքարերու ուսումնասիրութեան, և վերականգնանցնել այդ կորուած ճիւղը հայ գեղարուեստին:


Անդրադարձէ՛ք խաչքարերուն, անոնք խորհրդաւոր են, անոնք գեղեցիկ են, անոնք հայկական են, անոնք մե՛րն են:

ԲԱՅԳԻՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ

Յ. Գ.—Հայ ճարտարապետ Թ. Թոթումանեան, նոր հրատարակեց պատմական լաւ ուսումնասիրութիւն մը Տեկորի տաճարին վրայ: Տաղանդաւոր ճարտարապետը իր այդ ուսումնասիրութեան մէջ կը խօսի խաչքարերու մասին, և այս առթիւ խաչքարի սքանչելի նմոյշ մըն ալ դրած է հոն: (Տե՛ս էջ 90, ինչպէս նաեւ գրքի վերջին կողքը):



ԱՇԽԱՐՀԻ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆԸ ՄԵՍԻԱՅԻ ԳԱԼՍՏԵԱՆ ՀԱՄԱՐ



Կրօնքը չի ձգար մարդոց ուսին վրայ ծանր լուծեր դնելու, անոր ազատասունչ խորհուրդներուն թեւերը փետրատելու, այլ ընդհակառակն կը ներշնչէ անոնց սրբութեան, արդարութեան ու սիրոյ իտէալներ, որոնց բարգաւաճումէն կախում ունի մարդոց միջեւ անհրաժեշտ խաղաղութիւնը:

Քրիստոնէական կրօնի ծագումէն առաջ աշխարհիս ներկայ կրօնքները չկրցան պահել ժողովուրդը բարձր մակարդակի վրայ, և մարդկային քաղաքակրթութեան ու մատուորական յառաջդիմութեան հետ համընթաց ըլլալ, քանի որ անոնք համապատասխան չէին մարդկային բանականութեան, մաքի ձգտումներուն և հոգեկան բաղձանքներուն: Հետեւաբար անոնք մեռելային վիճակ մը ունէին: Եւ կամ իրենց գոյութիւնը կը քաշկուտէին հե ի հե, զուրկ կենսականութեան նշաններէ:

Մովսիսականութիւնը թէեւ բարձր բարոյական մը ունէր, բայց ան ալ կարող չէր գոհացնել ներկայ պէտքը, ըստ որում տիեզերական կրօնք մը ըլլալու ընդունակութիւնը չունէր, և կորուսած էր իր ներքին կենսական ուժը, օրէնքներու և ծէսերու անկենդան ըրածոյի մը վերածուելով:

Ուստի բովանդակ մարդկութիւնը կը տառապէր անբարոյականութեան և անարդարութեան ծովացող ալիքներուն դէմ: Բարոյականի մաքրութիւն փնտռել հեթանոս աշխարհի մէջ, գրեթէ ծիծաղելի բան մը դարձած էր:

Յունաստանի մէջ ընտանեկան սրբութիւնը շատոնց անհետացած էր: Հռոմի մէջ բարոյական կեանքը աւելի վստփաւացած, ու կայսերական պալատէն սկսեալ՝ անբարոյականութիւնը ընդհանրացած, և տիեզերական եղած էր, ինչպէս երուսաղէմի մէջ Հերովդէսի ընտանիքը անբարոյականութեան բոյն դարձած էր: Հռոմի պատերու և շէնքերու կարեւոր մասերուն

մէջ մերկ, լավիշ ու անբարոյական ազատ նկարներ կը ցուցադրուէին: Մեծ անուններու, ինչպէս Պոմպէոսի, Կեսարի նման նշանաւոր մարդոց անուններու շուրջ անբարոյական և գայթակղարից սլաւութիւններ կը տարածայնուէին: Յորնալ կը պատմէ թէ շատ մը կիներ կ'ամուսնալուծուէին, առանց իրենց տան զրան հարսանեաց կամարին տերեւները թառամելու. կիներ իրենց տարիքը իրենց ունեցած էրիկներուն թիւովը կը հաշուէին: Պլինիոս կը վկայէ թէ Մակիլայի և Կասիոսի պաշտօնի եկած օրէն ի վեր համեստութիւնն և սրբութիւնը դադրած էին գոյութիւն ունենալէ. Հռոմի մէջ: Կանանց առաքինութիւնը մեռեալ տառ մը դարձած էր: Ուրիշի մը կնոջ հետ յարաբերութիւն չունեցող մէկը կանացի և վախկոտ կը համարուէր: Բարոյական մոլութիւնը Հռոմի մէջ այնչափ յառաջացած էր, որ շատ մը ամուսնացեալ բարձր դասակարգէ կիներ իրար կը գերադանցէին իրենց անունները ստիկաններուն տալու, յայտնելով իրենց յօժարութիւնը՝ ամէն պարագայի տակ կանչուած տեղեր փութալու: Պօղոս Առաքեալ Հռոմայեցւոց ուղղած թուղթին մէջ շատ ախտեր գոյներով կը նկարէ անոնց բարոյական կեանքը, (Հռոմ. Ա. 26—28):

Բարոյական ապականութեան գուզնութեան գերեզմանութիւնն ալ իր զենիթը հասած էր Հռոմի մէջ: Ժողովուրդը շատ լռնութեամբ կը վարուէր գերիներու հետ, որոնց թիւը օրէ օր կը բազմանար, ամուսնալուծումներու և ապօրէն ծնունդներու անթիւ անմեղները իրենց մէջը խառնուելով, որոնք գրեթէ մարդ ըսուելու արժանի չէին համարուեր: Այս մասին զաղափար մը տալու համար, կը բաւէ միայն յիշել Վարդայի հետեւեալ խօսքերը: Վարդոն արջառները երեք դասակարգի կը բաժնէր, իրիւ անհրաժեշտ բաներ երկրագործութեան համար. — 1. Համրներ, որոնք էին կառքեր և զորքիքներ. 2. Լեզու ունեցողներ, եղեր. 3. Խօսելու կարողութիւն ունեցողներ, գերիներ: «Գերիներու դէմ ամէն ինչ ընել օրինաւոր է» խօսքը Հռոմի օրէնքին մեծ սկզբունքներէն մին էր:

Մարդիկ կը կարօտէին Մեսիայի կրօնքին ազատաշունչ պատգամներուն որ ըսէր. «Զիք խտիր ոչ Հրէի և ոչ հեթանոսի, ոչ ծառայի և ոչ ազատի, ոչ արուի և ոչ իգի»: (Գաղ. Գ. 28):

Ուստի ամբողջ աշխարհը աչքը երկինք յառած՝ անձկանօք կը սպասէր Մէկուն որ աշխարհ գար, ու հիմներ կրօնք մը՝ որ կոչուած ըլլար իբրեւ կուռ ու անխորտակելի խարակ մը՝ թուամբ մը կանգնելու համար կուսպաշտութեան և անբարոյակաշտութեան ծովացող ալիքին դէմ, և միանգամայն ըլլար տիեզերական փողփողուն փարոս մը՝ բովանդակ տառապող ու մոլորած մարդկութեան, իրապէս համապատասխան անոր քաղաքակրթութեան ձգտումներուն և հոգեկան բարձր իղձերուն:

Բոլոր աղգերու կրօնական հաւատալիքներուն մէջ ի վաղուց արդէն համաշխարհական աւանդութիւն մը կար, որ եթէ երկնային Աստուած մը մարդու կերպարանքով չըլէր երկրի վրայ, պիտի վերադարձնէր նախկին երանութեան Ոսկեդարը, որ չար ոգիներու աղդեցութեամբ ժամանակաւ կորսուած էր: Աթինացոց «Անծանօթին Աստուծոյ» բազինը, Եգիպտացոց «Փրկիչ մարդկան» դիքը, հնդկի զիցաբանութեան մէջ յիշուած «Գերագոյն էակին Միածին»ը յայտնապէս այս աւանդութեան բեկորներն են:

Պզատոն՝ գանդատելով իր դարու ապականութիւններէն, կը հաստատէ թէ Աստուած մը պիտի իջնայ երկինքէն, նորոգելու համար բովանդակ մարդկային ազգը: Մարք, Քաղղէացիք, երկինքի աստղերէն օգնութիւն կը հայցէին, ակընկալուած Մեսիայի գալուստը գուշակելու համար: Սամարացիք անկէ պիտի սորվէին իրենց կրօնական հաւատալիքները (Յովհ. Դ. 25): Իսկ Հրէից գալով, ակնկալուած Մեսիան արդարութեան օրէնքով թաղաւորութիւն մը պիտի հիմներ, և իրենց կրօնական ու քաղաքական վերածնունդին հերոսը պիտի ըլլար: Մարգարէներու գրքերը լեցուն էին անոր մասին նախագուշակութիւններով: Եսայի, Երեմիա, Եզեկիէլ չատ կանուխէն պատրաստած էին Հրէից

միտքերը, մանաւանդ Հրէից վերջին գրութիւնները աւելի ճշտու կը պարզէին զայն: Դանիէլի գրքին մէջ, «Երկնից արքայութեան» մերձեցումը, «Որդի Մարդոյ» իշխանութիւնը. Ենովքայ(*) գրքին մէջ «Լնարեալ»ը, «Օծեալ»ը, «Արդարութեան ծառը» պարզապէս Մեսիան կը մատնանշէին: Սիմէոն ծերունին, Աննա, Յովսէփ Արեմաթացին «ակն ունէին» Մեսիայի մօտակայ թագաւորութեան համար:

Նախախնամութիւնը կարծես աշխարհիս քաղաքական վիճակն ալ պատրաստած էր, ասանկ տիեզերական կրօնքի մը ծաւալման համար: Ամբողջ հին աշխարհը քայքայուած էր Հռոմի կայսրութիւնը սկսելէ առաջ: Արեւելքի մեծ պետութիւնները, Ասորիստան, Բաբելոն, Պարսկաստան, Եգիպտոս իրենց փառքը անցուցած էին: Մեծն Աղեքսանդրի տիեզերական կայսրութիւն մը հիմնելու անյաղ տենչը միացուցած էր ամբողջ Արեւելքը Յունաստանի հետ, յունական բարձր քաղաքակրթութիւնն ու լեզուն տիեզերական դարձնելով: Բայց իր մահէն ետքը իր պետութիւնը բաժնուեցաւ իր յաջորդներուն միջեւ, ապա Հռոմի կայսրութեան ձիրաններուն տակ ինկաւ: Օգոստոս կայսրը հրաման տուած էր որ բոլոր աշխարհ արձանագրուէր իր տոմարին մէջ. ասիկա կը ներկայացնէ մեծ տիեզերական կայսրութիւն մը որուն կեդրոնը Հռոմ եղած էր: Քաղաքական և առեւտրական նպատակներու համար Հռոմի կայսրութեան կողմէ անթիւ անհամար ճամբաներ, կամուրջներ շինուած էին, և ամբողջ ծանօթ աշխարհները հաղորդակցութեան բազմապիսի միջոցներով իրարու կապուած էին: Յոյն լեզուն, գրականութիւնն և գեղարուեստը ամենուրեք տարածուած էր արդէն Մեծն Աղեքսանդրի միջոցաւ:

Քրիստոսէ առաջ աշխարհիս կրօնքները, մանաւանդ Մովսիսականութիւնը, կարծես միակ նպատակ մը ունէին. պարտաւորել աշխարհը գրկաբաց ընդունելու Մես-

(*) Հրէից նուիրական գրքերէն (Apocryphe = անվաւեր) մին է, որ գրուեցաւ մօտաւորապէս դա՞ր մը առաջ Քրիստոսի ծննդեան թուականէն:

խաչի կրօնքին վսեմ ու աստուածային պատգամները: Մարգարէից ժամանակ, Ամսիւն սկսեալ, Հրէից կրօնքը սկսած էր թեւակոխել հսկայաքայլ զարգացումի եւ աճումի նոր շրջան մը: Ամսիւն Աստուծոյ որդարութիւնը, իրմէ ետքը Ռփիա Անոր սէրը, Նոայի Անոր որդութիւնն ու հայրութիւնը, Երեմիա Անոր տիեզերականութիւնը, ինչպէս նաեւ խղճմտանքի ու սրբութիւն մարտութիւնը, եղեկիւ վերջին օրերու մասին Աստուծոյ կարգադրութիւնը որոշապէս ի յայտ բերած էին: Ասոնք Մեսիայի քարոզութիւններուն համար պատրաստութիւններ եղան: Յոյն դատաւարականութիւնն ու փիլիսոփայութիւնը՝ անհատը զարգացնելու, խօսքի ու գրչի ազատութիւնն յարգելու եւ բոլոր փիլիսոփայական նոր դպրոցներու եւ տարբեր կաղնակերպութիւններու հանդէպ իր յոյս տուած լայնախոհ ոգիով կուգար աջակցել Քրիստոնէութեան գաղափարներուն տարածման գործին, ինչպէս Յոյն լեզուն Մեսիայի Աւետարանը հասկնալի ըրաւ աշխարհիս հետաւոր անկիւնները:

Այս ամէնը պատրաստութիւններ էին գեալնը յարգարկու տիեզերական կրօնքի մը համար, որուն Հիմնադիրը եւ Հերոսը պիտի ըլլար անկախուած Մեսիան, այսինքն Յիսուսը:

Եհշ Համարատան ԳԲ. Ա. ՍԱՐԱՑԵԱՆ
Ամերիկա

ՀԱՅ ՔԱՀԱՆԱՆ

Ժամանակէ մը ի վեր Տաճարի մէջ քահանայական խնդիրը կը յուզուի, եւ կարող ու լուրջ յօդուածագիրներ թեր ու զէմ դիտողութիւններով կը ջանան արծարել խնդիրը, որպէս զի վերջապէս իր լուծումը գտնէ: Սակայն ես կը մտածեմ որ, մեր Եկեղեցւոյ եւ եկեղեցականութեան բարեկարգման խնդիրը մէկ օրէն միւսը չիւրաւ լուծուելիք խնդիրներէն չէ: Տաճարի խմբագիրը եւ իրեն հետ նաեւ ուրիշներ չեղտեցին որ Եկեղեցւոյ բարեկարգութենէն առաջ, եւ ա՛յլաւելի, եկեղե-

ցականաց բարեկարգութեան կը կարօտինք: Ես այս կերպ չեմ մտածեր. երկուքն ալ միեւնոյն ժամանակ անհրաժեշտ պահանջներ են, Դամոկրկան սուրի մը պէս կախուած Հայ Եկեղեցւոյ ու եկեղեցականաց գլխուն, սպառնալով երկուքին ալ գոյութեան. եւ եթէ մօտ տանէն չփութանք մեր այս ցաւալի կայութեան դարման տանիլ, կը վախնամ որ մի՛ գուցէ փճանանք. Եկեղեցին ալ, եկեղեցականներն ալ: Կայութիւննիս յոյժ փափուկ է, եւ ամէն ազդասէր ու եկեղեցատէր անհատի մտածելիք կէտեր են ասոնք:

Հայ ժողովուրդը այսօր գրեթէ երեք դասակարգէ կը բաղկանայ. — Ա. Մասնորականները, կեդրոններու եւ մանաւանդ գաւառներու մէջ: Ասոնք հանդէպ կրօնի, հանդէպ Եկեղեցիի տարօրինակ ընթացք մը բռնած են. իրենց համար կարեւորութիւն չունի ո՛չ կրօն, ոչ ալ Եկեղեցի: Այս դատակարգը շատոնց թողած, լքած է Եկեղեցին, տարին հաղիւ երկու անգամ, այն ալ Չատիկին ու Ծնունդին կը բարեհաճի Եկեղեցի ներկայանալ... Երկուցիները վրկելու համար, խի՛ Եկեղեցւոյ Խորհուրդներու մասնակցել, շատոնց ձգած է: Ինչո՞ւ արգեօք. — Որովհետեւ իր ճաշակը նրբացած է. չի կրնար հանդուրժիլ հայ ազէտ կղերին կատարած կարգ մը մեքենական ձեւապաշտութիւններուն: Բարեկարգէ՛ Եկեղեցին, բարեկարգէ՛ նաեւ հայ կղերը, կիրակնօրեայ առաւօտեան ժամերգութիւնք թող տեւեն առ առաւելն 1—1½ ժամ, ան ալ կանոնաւոր երաժշտութիւնով, զարգացած, յառաջդիմած կղերի ձեռքով, յստակ առողջանութեամբ ու ջերմ հուռաքով, ընդունէ՛ նաեւ իրիկուն քարոզի ու կանոնաւորապէս Ս. գիրքի ընթերցման դրութիւնը, անո՞ թէ Եկեղեցին ինչպէս կը լեցուի ժողովուրդով, նոյն իսկ մասնաւորականներով:

Գալով Բ. դասակարգին, ասոնք բոլորովին անուս անտարբերներ են. ո՛չ Ս. Գիրքը կարդացած ունին եւ ոչ ալ Քրիստոնէութեան էութիւնն ու գոյութիւնը ըմբռնած, որովհետեւ ինչ յոյսած ենք որ ինչ պիտի հնձենք, հետեւորար ինչ կը յուսանք ստանցմէ:

Հայ Քահանաներս (բացառութիւնները յարգելով անշուշտ) ընդհանրապէս ջանացած ենք միշտ մեքենական ձեւերով թիւններով ու խուճկի բուրումներով ժողովուրդին աչքը չլացնել, ասկէ անդին ուրիշ ոչինչ ըրած ունինք:

Կայ երրորդ դատակարգ մըն ալ, մանաւանդ գաւառները. ասոնք քիչ չաւարդալ գրեց գիտցող բարեպաշտներ են, առտու իրիկուն և կիրակիները անպատճառ եկեղեցի կը յաճախեն, եկեղեցւոյ օրերն ու տօները կը յարգեն, կիրակի օրերը հաւաքումներ կ'ունենան և Ս. Գիրքի ընթերցումներ կ'ընեն: Սակայն գիտէք ի՞նչ կ'ընէ Հայ Քահանայութիւնը ասոնց համար: Ժողովուրդէն աւելի ինք կ'իյնայ ասոնց ետեւէն, կը հարուածէ, կը հալածէ, կը ծաղրէ, մինչև իսկ Մուհամմէտի, Մուհմի և այլն մակերևորով կը մկրտէ զանոնք. այս վերջինք ալ՝ արդէն տգէտ՝ կը յուսահատին և ուրիշ յարանուանութիւններու կը յարին:

Ես չատ երիտասարդներու հանդիպած եմ, որոնք յանկարծ կրօնական արթնութիւն մը ունեցած են, ջանացած են կարելի եղածին չափ մաքուր կեանք մը ապրիլ և ասոնք մը ապրած ալ են: Դժբախտաբար Հայ կղերին կողմէ՝ պէտք եղած քաջակրօններ չկրնալ գտնելով, ընդհակառակն ծաղր ու ծանակ եղած, հարկադրուած են թողուլ իրենց մայրենի եկեղեցին և այլոց յարիլ:

Այո՛, բարեկարգելու ենք, և չո՛ւտ, եկեղեցին ալ, եկեղեցականութիւնն ալ. յապաղում, դեղեւում մահուան ընդ առջ երթալ ըսել է. մեր գերեզմանը մեր իսկ ձեռքերով պիտի սախուլինք փորել:

Հայ ժողովուրդը ի վաղուց անտի կրօնատէր ու եկեղեցատէր ժողովուրդ մ'ըլլալով, չեմ կարծիր որ այսօր մէկէն ի մէկ անհաւատութեան սոսկալի ախտով վարակուած ըլլայ. ան միշտ սիրած ու յարգած է արժանաւոր հայ քահանաները, և պատուաւորապէս ապրեցուցած է զանոնք: Դժբախտաբար այս պարագային՝ ալ յուսահատած՝ վերջնականապէս լքել սախուլում է կրօնն ալ, կղերն ալ, եկեղեցին

ալ: Ուրեմն է՞ր դեղեւինք, սպասենք մինչև որ քահանայութիւնը բարեկարգութիւն բերեցնէ, նաեւ եկեղեցին, որպէս զի ուրեք ուրեք տեսնուին անոր օգուտները, և աստիճանաբար բարեկարգելու ջանանք նաեւ հայ եկեղեցականութիւնը:

Անցեալները Հալէպի մէջ Կիլիկիան քահանայական Միութիւն մը կազմելու փորձը գրուած էր Տաճնորի մէջ, և Սրբ. Խմբագիր Տ. Հայրը շատ իրաւամբ կը գիտէր որ «Ի՞նչ պիտի կրնայ ընել Քահանայական Միութիւնը՝ առանց ժողովուրդի աջակցութեան»:

Շատ իրաւացի էին Տ. Հօր դիտողութիւնները. սակայն, ի՞նչ ունինք ըսելիք ժողովուրդին, ի՞նչ ընէ ժողովուրդը. քիչ մըն ալ մենք, քահանայքս ջանալու ենք: Եկեղեցւոյ բարեկարգութիւնը մեզ համար, մանաւանդ քահանաներուս համար կենսական, մահու և կենաց ինդիք մ'է, և մենք կը թողունք որ ան ալ ժողովուրդը ընէ անպատճառ:

Անտիոք

ՎԱՂԱՐՇԱԿ ԲԼԵՅ ԶԵՐԱԶԵԱՆ

ԽՍԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ՏԱՃԱՐ»Ի

Շատ արդարացի դիտողութիւններ կ'ընէ Արթ. յօդուածագիր եղբայրը՝ Դիտել կուտանք միայն թէ թուած բոլոր անպատեհութիւնները յառաջ կուգան մի միայն իրենց պարտականութեան դեմակից ու կարող եկեղեցականութեան մը չգոտուան ժամերգութեան կրճատումէն դուրս (որ եկեղեց. Բնդհ. ժողովի մը գործն է), ուրիշ ի՞նչ որ պահանջած է երբեւ բազմակարգելի՝ եկեղեցւոյ մէջ, բոլորն ալ կարելի է գործադրել անձնական նախաձեռնութեամբ, երբ ունենանք պարտաճանաչ, գիտակից հոգեւորականներ և հաստատութիւնք ուրեմն մեր կարծիքին մէջ թէ եկեղեցիէն առաջ եկեղեցականութիւնը պիտի կարգել, նիւթական, բարոյական և բնացական բարձր գիւրքի մէջ դնելով զայն: Երբ զարգացեալ, նոյն ջերմ հաւատացեալ — կղեր մը ունենանք, եկեղեցւոյ բարեկարգութիւնը շատ կը դիւրանայ, և գրեթէ ինքնին կը կատարուի:

ԲԱՑՈՒԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ
 “ՏԱՃԱՐ,,Ի ԵՐՐՈՐԴ ՇՐՋԱՆԻՆ

Տաճար իր երկրորդ շրջանին վերջին ամիսը թեւակոխելու առթիւ, լի վստահութեամբ՝ իր ձեռնարկած գործին օգտակարութեան և տեւականութեան վրայ, կը բանայ այժմէն իր երրորդ շրջանի բաժանորդագրութիւնը:

Ասիկա առիթ մըն է յետահայեաց ամփոփ ակնարկ մը ձգելու թերթին անցեալին վրայ:

Հայ եկեղեցականներու, մասնաւորապէս քահանաներու փափաքին և նախաձեռնութեան ծնունդ, այս թերթը հիմնուեցաւ՝ ժողովուրդին մէջ արծարծելու նպատակով Քրիստոնէական կրօնքի և Հայ եկեղեցիի սէրը, նուիրական զգացում մը, որուն տկարացումը կը շեշտուէր վերջին մէկ քանի տարիներու միջոցին, նախ՝ վարժարաններու մէջ հիմնական, լուրջ մեթոտ մը ընդունուած չլլալով կրօնի ուսման, և երկրորդ՝ ազատութեան սխալ ըմբռնումով մը՝ սովորոյթ դարձած ըլլալով հարուածել կրօնքն ու եկեղեցին:

Տաճար, մինակը, անշուշտ յաւակնութիւն չէր կրնար ունենալ թումբ կանգնելու սկեպտութեան բուռն հոսանքին դէմ, զոր կասեցնելու համար շատ լուրջ, և համայնական ջանքեր ընել հարկ է: Եւ սակայն աշխատեցաւ իրեն բաժին ինկած պարտականութեան կատարման հոգ տանիլ: Ինչ որ կրցաւ ընել, շատ թերի է անշուշտ, և շատ աննշան մէկ մասը կը կազմէ բաղդատմամբ անոր զոր պարտաւոր է ընելու:

Պզտիկ է իր ըրածը՝ պէտքին մեծութեան առջեւ: Բայց երբ բաղդատուի իր ձեռքն ունեցած միջոցներուն հետ, պիտի տեսնուի թէ ջանքն և բարի կամեցողութիւնը չէ որ պակասած են իր տնօրէն-խմբագրին քով: Այդ ջանքին կը միանայ անվհատ յարատեւութեան ոգին, որ երբեք չպիտի գիտնայ կասիլ ո և է դժուարութեան առջև, և որուն աւելի եւս ուժաւորուելուն առիթ կը դառնայ հոյլը համակրողներու և ազնիւ աշխատակիցներու, որոնք գրականապէս ու գրականապէս սատարեցին այս թերթին այնքան օգտակարապէս ծառայելուն առաջադրուած նպատակին:

Այդ ազնիւ նպատակին աւելի ուժգնութեամբ ու եռանդով ծառայել պիտի աշխատի Տաճար յառաջիկայ երրորդ շրջանին, որու միջոցին որոշ ուղղութեամբ մը պիտի ունենայ միշտ:

Ա. Հոգեւոր կեանքի բաժինը:

Բ. Հայ վիպաբանութեան բաժինը:

Գ. Կրօնի յարեւանական ճշմարտութիւնները ժողովրդական լեզուով

մը հաստատող համոզիչ գրութիւններ՝ ինքնագիր կամ եւրոպական նշանաւոր հեղինակներէ թարգմանաբար:

Դ. Նախնեաց մասեւնագրութեան ընտելցողներուն ժողովրդակա-
նացումը, ձեռնհաս և հմուտ գրիչներու կողմէ աշխարհաբար թարգ-
մանուելով: Ասոր իբր սկզբնաւորութիւն, ի մօտոյ կը սկսինք հրա-
տարակել Շնորհալիի Ընդհանրականին Առ Քահանայս ուղղեալ հատ-
ուածը, որ այնքան այժմէութիւն ունի, քահանայութեան նիւթա-
կան և իմացական մակարդակին բարձրացման հարցին առթիւ:

Ե. Թելադրիչ պատմութիւններ, որոնք մերթ ընդ մերթ պիտի ե-
րեւան այս սիւնակներուն մէջ, իբրեւ գործնական օրինակ մը ազ-
նիւ զգացումներու, և թելադրող մը բարձր մտածումներու:

Ձ. Ս. Գրական ուսումնասիրութիւններ, որոնց գեղեցիկ մէկ նմոյշը
տուաւ Տիար Գէորգ Մեօրուպ, իր այնքան հմտալից գրութիւններով՝
Եքրայական Մարգարէութեան Ծագման վրայ, և ԺԲ. Մարգարէներու
Ներածութիւնով: Այս վերջնոյն շարունակութիւնը պիտի վերսկսի
ընդհուպ:

Միւս կողմէ, արդարացնելու համար թերթին գրական հանգա-
մանքը, խմբագրութիւնս դիմում րրած է ազգին մէջ ամէնէն աւե-
լի սիրուած գրողներու, իրենց հիւթեղ ուսումնասիրութիւններով
զարգարելու Տաճարի սիւնակները, որովհետեւ մենք կրօնք և գրա-
կանութիւն, կրօնք և գիտութիւն իրարու հակառակ բաներ չենք
կրնար նկատել. անոնք՝ ընդհակառակն՝ իրար կը լրացնեն, և իբր
այն՝ իրենց որոշ տեղը պէտք է ունենան կրօնա-բարոյական թերթի
մը մէջ. փափաքող ենք որ մեր քահանայ Հայրերն ալ անմասն չմնան
անոնցմէ, հետաքրքրուին անոնցմով:

Ազգային բաժինին մէջ ամէն շաբթու պիտի ամփոփուին շաբ-
թուան կարեւորագոյն լուրերը, գոհացում տալու համար առաւե-
լապէս գաւառի և արտասահմանի մեր այն հեռաւոր բաժանորդնե-
րուն որոնք Տաճարէն ուրիշ թերթ չեն ստանար:

* * *

«ՏԱՃԱՐ»Ի ԹՈՒՐՔԵՐԷՆ ԲԱԺԻՆԸ

Տաճար իր երկամեայ գոյութեան շրջանին մէջ, տարածուելով
պիսաւորաբար հայախօս գաւառներու մէջ, մասամբ միայն կրցաւ
կատարել իր պարտականութիւնը: Բայց Փոքր Ասիոյ արեւմտեան
կողմը շատ քաղաքներու մէջ Հայութիւնը դժբախտաբար կորսնցու-
ցած է իր մայրենի լեզուն, և չունի թերթ մը ուր խօսուի իրեն
Հայո՛ւ կրօնքին վրայ, Հայ առաքելական Եկեղեցւոյ ոգիով:

Անցեալ տարիէն զանազան կողմերէ խնդրանքներ եղած էին
խմբագրութեանս, գոհացում տալու այս պէտքին ալ, բայց համար-

ձակութիւնը պակսեցաւ մեզի, գործին նիւթական դժուարութիւնը աչքի առջեւ ունենալով:

Նոյն դժուարութիւնները կան այսօր ալ, քանի որ Տաճար, իր ներկայ վիճակով, հազիւ թէ կարող կ'ըլլայ իր գոյութիւնը պահել: Բայց պէտքին ստիպողականութիւնը և բարեկամական յորդորներ ու քաջալերանքներ՝ կը մղեն զմեզ փորձ մը ինքնուրու: Հետեւապէս երրորդ շրջանի առաջին թիւէն սկսեալ կ'առաջադրենք—**ԹԵՐԹԻԱ 16** էջ հայերէնի մասը անփոփոխ պահելով—յաւելուածական ուրիշ եղեր տալ հայատառ թուրքերէն լեզուով և հոգեշահ բովանդակութեամբ:

Ասիկա պիտի շարունակուի անխափան երեք ամիս. և եթէ երբեք ժողովրդային քաջալերութիւնը գայ աջակցիլ մեր ջանքերուն, պիտի շարունակուի ընդմիշտ:

Հետեւապէս Տաճար յառաջիկայ երրորդ շրջանին փոխանակ ծանուցեց երեսի, պիտի հրատարակուի *խանդարու էջ, ՆՈՅՆ ՄՆԱ-ԼՈՎ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ*՝ այն է Պոլսոյ և գաւառաց համար 40 դր., և արտասահմանի համար 10 ֆր., կամ 2 տօլար, կամ 4 բուլբի:

* * *

Ամենաշերմ շնորհակալութեան պարտք մ'ունինք մեր բազմաթիւ ընթերցողներուն, և պատուական աշխատակիցներուն և գործակալներուն, որոնց համակիր աջակցութիւնը կը մղէ զմեզ յուսալից կերպով մտնելու նոր գոհողութիւններու ճամբուն մէջ:

ԽՐԱԿԱՐՈՒԹԻՒՆԸ

ՀԱՅ ՄԱՄԻԿԸ

Դուն տոյնս նսած եր, ձեռքս երկու՝ ծնօսիւն.
Այնքան մեծ արցունք կար. — ձուլարան իր վիշ-
տուն:

Անցայ իմիկ յարգանքով, ցրեցեց երգն իր քրքրուն.
Ու կայնեցայ յեղակարծ. — Ան կ'երկարէր շէշն յե-
սիւն...:

— Մառիկս, ինչո՞ւ կը հեծես, դուն շատ շատ ես
արդեւ,

Հարցոյցի ես փայտորեւ, յաւադրեղ ջանալով.
Ես անծանօթ. սիրազե՞ղ, վեր նայեցաւ յուզումով.
= Չարկս, ի՞նչպէս ես չի լաւ, Հայն անիծումս
կ'բաղդեմ:

— Զե՛ մառիկ, չե՛, հերի՛ք, շատի՛ դարեւ անցած է ալ
Զի շեղի՛ր Զայնն անուշ Ազատութեան ցանկալի,
Դուն ի՛նչ օրեր ասիկ վերջ պիտի տեսնես անի...:

— Զե՛ մառաւս, գրած է. չեմ կրնար ես հաւատար.
Վախանքս տու չի խօսի, ձագո՛ւկս, մեզ շատ խա-
րէր են:

Հագիւ շատ, ես տեսայ կախումս արցունքն աչքերէն:
Ու մեկնեցայ շատով: Ան մնաց իր շատին յետ...:

ՍԱՀԱԿ-ՄԵՍՐՈՊ

ՄՏԱԾՈՒՄՆԵՐ

ԽՆԺՄՏԱՆՔԸ

Խղճմտանքն աստուածային խօսք մ'է,
համայն մարդկութեան ուղղեալ:

* * * Խղճմտանքն Աստուած է, և ներ-
կայ՝ մարդուս մէջ: Վ, Հիւօ

* * * Խղճմտանքը լաւագոյն գիրքն է
զոր ունեցած լինինք, անոր աւելի կը
պարտինք խորհուրդին զիմիկ:

* * * Խղճմտանքը բնագլխով մ'է աստուա-
ծային, անմահ և երկնային ձայն, ապա-
հով առաջնորդ իմացական և ազատ էակի
մը, անսխալ զատաւոր բարւոյ և չարի,
որ զմարդն Աստուծոյ կը նմանցնէ: Առանց
անոր չեմ զգար բան մը որ զիս վեր
բարձրացնէ անասուններէն:

Ռուսո

* * Դիտէ՛ք ու ներսի դին . քու մէջն է
բարւոյ աղբիւրը , աղբիւր մը անցամաքելի ,
բաւական է որ զայն միշտ փորփրես :

Մարկոս Աւրելիոս

* * Խղճմտանքը գիտակցութեան բազ-
կերակն է որ կը վարնէ և մեզ կ'ազդարարէ :

* * Հոգիներուն խորն ընդոժին սկզ-
բունք մը կայ արդարութեան և առաքի-
նութեան , որուն վրայէն կը դատենք մեր
յատուկ գործերն և ուրիշի գործերն իբրեւ
բարի կամ չար . այս սկզբունքն է որ խղճ-
մտանք կը կոչուի :

* * Խղճմտանքի հետ իրաւախոհութիւն
չի կայ բնաւ :

* * Ճշմարիտ մարդը կը խոնարհի իր
խղճմտանքին առջև . բայց խղճմտանքը
երկրի վրայ տէր չունի , այսինքն ինքն
տրիշի առջև չի խոնարդիր :

* * Խղճմտանքը կը նմանի մտքի կա-
րողութեանց . անիկայ պէտք ունի կրթուե-
լաւ . կիրարկելով զայն , կ'ուսուցանենք
իրեն աւելի ճիշդ տեսնել :

* * Երբ խղճմտանքը կը խօսի , պէտք է
միայն զինքը լսել և իրեն հետեւիլ :

* * Փափուկ խղճմտանք մը անգնա-
հատելի ըարիք մ'է , այսինքն խղճմտանք
մը որ ոչ և եթ խսկոյն նշմարէ չարն , այլ
ընազդօրէն զգուշանայ անկէ , ինչպէս որ
արաւանունքը փոքրիկ վտանգի մը մերձե-
նալուն խսկոյն կը փակուի :

Թոմաս Աստ

* * Գնա ո՛ւր որ կ'ուզես , դու հոն
պիտի դանես խղճմտանքը :

* * Հսկեցէ՛ք ձեր վրայ , ձեր ամբաս-
տանդն եզի՛ք , յետոյ ձեր դատաւորը ,
երբեմն չնորհ ինդրեցէ՛ք և եթէ հարկ լինի ,
դուք զձեզ պատիժի ենթարկեցէ՛ք :

* * Խղճմտանքի քննութեան արդիւնքը
պիտի լինի , ասեմք մը վերջը , զմեզ լու-
սաւորել մեր թերութիւններու մասին :

* * Խղճի խայթը ցաւ մ'է որ ձեզ
կ'ազդարարէ թէ ձեր մէջն անկարգու-
թիւններ կան :

* * Նա որ կը զղջայ , նման է անոր որ
չմեղանչեց , կ'ըսէ Մուհամմէտ :

* * Շիկնի պէտք է յանցանք մը գոր-
ծելէ , ոչ թէ զայն դարմանելէ :

* * Յանցանքը կրկնապատկել կը նշա-
նակէ , երբ անկէ չեն ամաչեր :

* * Իմ բոլոր ճառերէս աւելի ես խմ
խղճմտանքի վկայութիւնը կը նախընտրեմ :
Կիկերոն

* * Եթէ կռիւ կայ նւթական աշխար-
հի և բարոյական աշխարհի մէջ , այսինքն
իրականութեան և խղճմտանքի մէջ , խղճ-
մտանքն իրաւունք ունի :

* * Մարդիկ երբ յանցանք մը զործել-
նուն համար փոշիի մէջ թաւալին ,
կարիք չի կայ հոն մնալու , պէտք է վեր
կենալ և մաքրուիլ :

* * Ո՛րքան և ամօթոյ արժանի գործ մը
կատարած լինինք , միշտ մեր ձեռքն է մեր
անունը դարմանել :

* * Իտրեգործութեան մէջ չեմ գիտեր
ինչ գոհացում և վեհանձն հոգարտութիւն
կայ որ մեր բարի խղճմտանքին կ'ընկերանայ :

Քաղեց

ԽՍ.ՁԻՍԱՐ

ԿԱՐԵԻՈՐ

Ամէն անոնք որ այժմէն կը
բաժանորդագրուին Տ ա ճ ա Ր ին՝
յառաջիկայ շրջանին համար՝
կանխիկ դրկելով իրենց բաժնե-
գինը , մինչեւ տարեշրջան հրա-
տարակուելիք թիւերը ՁՐԻ ՊԻՏԻ
ՍՏԱՆԱՆ , և հոգեշահ գեղեցիկ
ատոր մըն ալ ՆՈՒԷՐ ՊԻՏԻ
ՏՐՈՒԻ իրենց :

* *

Մեր պատուարժան գործա-
կախներէն կը խնդրենք տարե-
գլուխէն առաջ մաքրել իրենց
հաշիւը , ի վիճակի դնելու համար
զմեզ գործադրելու այն օգտա-
կար առաջադրութիւնները զորս
կը պարգենք քիչ մը անդին : Նոյ-
նը կը խնդրենք ուղղակի բաժա-
նորդագրուող այն անձերէն , որ
տակաւին իրենց բաժնեգինը չեն
դրկած :

ԱԶԳԱՅԻՆ ԿԵԱՆՔԸ

ԿԱԹՈՂ. ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ

Կաթողիկոսական ընտրութեան պատգամաւորներու վերջին խումբը մեկնեցաւ չարթուս: Թրքահայ և մանաւանդ Ռուսահայ թերթերու մէջ այս կամ այն եկեղեցականին անուան շուրջը յարուցուած արդարացի կամ չափազանցուած ներքուհաններէ կամ դատաւիտումներէ ետքը, խօսքը կը մնայ հիմայ Ս. Էջմիածնի մէջ գումարուող ընտրողական համազգային ժողովին: Մենք կը մագթենք և վստահ ենք որ այդ ժողովը — համախմբուած մը աշխարհի ամէն կողմերէն Հայութեան այդ կրօնական կեդրոնը գլխով ընտրեալ պատգամաւորներու — պիտի գիտնայ իր կոչումին բարձրութեան վրայ մնալ, վերամէն կուսակցական կամ անձնական նկատումներէ, և առաջնորդուի միմիայն ազգին ճշմարիտ օգուտին տիրական գաղափարէն, ընտրելու համար Ս. Լուսաւորչի Դահուն արժանաւոր յաջորդ մը, օգտուած Հայ եկեղեցւոյ ժողովրդավարական ոգւոյն կատարեալ գիտակցութեամբ, անկախ նկարագրով, և ժամանակիս բազմադիմի պահանջումներուն համապատասխան բարձր զարգացումով:

Ո՞վ պիտի ըլլայ. ո՞վ պէտք է ըլլայ այդ ընտրեալը: Տաճար հրատարակելով հանդերձ պատուական աշխատակիցներու, — մասնաւորապէս մեր աղնիւ պաշտօնակից և Ազգ. երեսփոխան Արշակ Էֆ. Ալպոյաճեանի — տեսութիւնները, և արձագանգ ըլլալով հանդերձ զանազան թերթերու կարծիքին, չուզեց իր կողմէն ընտրելի մը յուշնել, մասնակցած չըլլալու համար լրագրական բանավէճերու, որոնք, աւանդ, յաճախ ազգին օգուտէն բոլորովին տարբեր նկատումներ կ'ունենան իրենց չարժաւոր:

Ամէն նկատումէ վեր, ժամանակ է սակայն որ — կաթող. ընտրութիւնը կատարուելէ առաջ — պարզենք մեր ալ հայեացքը երկու բառով:

Արդ, մեր համոզումն է թէ, ժողովրդային ընդհանուր համակրութիւնով չորջապատուած եկեղեցականի մը չգոյութեան պատճառով, և միւս կողմէ Ամենայն Հայոց Հայրապետին միւլնոյն ատեն մեր Ռուսահայ եղբարց Պատրիարքը ըլլալու հանգամանքով, և այն նկատումով որ անոնք (Ռուսահայերը) պէտք ունին երկրին լեզուին և օրէնքներուն գերազանցօրէն հմուտ, վարչագէտ եկեղեցականի մը՝ կարգադրելու համար կրօնական, կրթական և ընկերային կենսական հարցեր, պէտք է, անհրաժեշտ է որ այս անգամ Ռուսահայ եկեղեցական մը բազմի առեւանջը Հայոց Հայրապետութեան Աթոռը:

Կը խոստովանինք թէ ի վիճակի չենք մասնանշելու Ռուսահայ այն հոգեւորականը, զոր արժանի կը նկատենք այդ բարձր ու նուիրական պաշտօնին: Տեղակալ Սուրէնեանց Արքեպիսկոպոսը պէտք է ըլլայ ան, Պարզեանց Սրբազանը, Կարապետ թէ Մեսրոպ Սրբազանները, և կամ Բագարատ վարդապետը: Ասոնց ամէնուն ի նպատակ է ընդդէմ գրաւածները զմեզ լուսաբանելէ աւելի վարանումի մատնեցին, քանի որ չունէինք անձնական ծանօթութիւն իրենց հետ, և իրենց կեանքին ու գործունէութեան վրայ հրատարակուած տեղեկութիւնները բացարձակապէս կը հակասէին մէկմէկու:

Գալով այն թրքահայ եկեղեցականներուն, Օրմանեան և Դուրեան սրբապաններուն, որոնց վրայ խօսուեցաւ ամէնէն աւելի, շատ որոշ է մեր կարծիքը: Օրմանեան Ս. Բ. անուան շուրջը յարուցուած ազմուկը, նոյնիսկ իրեն դէմ եղած դատաւիտումները, գրաւական մ'են իր բարձր արժանիքին: Ոչ ոք կ'ուրանայ իր խորունկ և համայնագիտական հմտութիւնը: Անիկա մէկն է Հայ եկեղեցականութեան ամէնէն հեղինակաւոր դէմքերէն, և Ազգ. ժողովին և իր Ասենապետներու Դիւանին ձեռնադրուած ամբաստանութեանց մասին վերջնական վճիռ մը տալու, մեծագոյն անիրաւութիւն մ'է որ կ'ըլլայ այնպիսի անձնաւորութեան մը նկատմամբ, որ ամբողջ

Թրքահայը ներկայացուցած է տասներկու տարիներ չարունակ: Բայց ինչ որ ալ ըլլար այդ վճիւր, մենք չենք յուսար որ կարենար նշանակելի կերպով փոփոխել Թըրքահայ ժողովրդային տրամադրութիւնը իրեն նկատմամբ: Այդ տրամադրութիւնը բացօթյա պէտ աննպաստ է ն. Սրբազնութեան, և 1908ի տգեղ ցոյցէն ետք ալ ատիթ ունեցաւ արտայայտուելու: Վերջին անգամ Պատրիարքարան հրաւիրուած Համագումարն ալ, էջմիածնի Համագումարին ժողովին ուղղած իր բանաձևով, պարզ մէկ ցոյացումն էր ժողովրդային այդ տրամադրութեան, որուն առջև հարկադրուեցան գլուխ ծռել ն. Սրբազնութեան ամէնէն ջերմ համակիրները, և անոր կաթողիկոսացման ամէնէն աւելի փափաքողներն անգամ: Այդ տրամադրութիւնը տարածուած է ամէն կողմ, Պոսէն մինչև զաւառը, այն աստիճան որ իր կաթողիկոսացումը անհրաժեշտաբար յառաջ պիտի բերէր արհուր պատահականութիւններ: Հետեւապէս շատ խելացի և ազնիւ գործ մը կատարած է ն. Սրբազնութիւնը, ժառանգակի մէջ հրատարակելով, — թէ և քիչ մը ուշ — այն նամակը, որով կը յոժարի նոր Յովնան մ'ըլլալ իր անուան շուրջը յարուցուած աղմուկներուն վերջ տրուելու համար (*):

Դալով Դուրեան Սրբազանի, վանական խաղաղ միջնորդի մէջ ապրած, ու ամբարած խորունկ և մասնագիտական հմտութիւն մը, օժտուած բանաստեղծական խոհալ տաղանդով մը և չըջապատուած անբասիր եկեղեցականի արդար համբաւով գերազանց ուսուցիչն է ան, տիպար վարդապետը — բառին լաւագոյն առումով —, և անիրաւութիւն մը պիտի ըլլար իրեն՝ տանիդ բազմեցնել Աթոռ մը, որ ա'յնքան փրշալից է որքան նուիրական, չըջապատուած ըլլալով ներքին և արտաքին հերթիկներով

(*) Կը կրկնենք սակայն թէ բացարձակ անիրաւութիւն մ'է տարիներով ամբաստանեալ վիճակի մէջ թողուլ Օրմոնեան Ս.ը, որ իր յառաջացեալ տարիքին մէջ պահած եղական աշխուժութեամբը, կրնայ տակաւին մեծ ու բազմապիսի ծաւալութիւններ մատուցանել ազգին:

որոնք կը վախնանք թէ պիտի կրնան վրտանգել իր անաղարտ համբաւը:

Բնութենէն իրեն արուած է Ապողոնի քնարը, Ս. Մեսրոպի քաղցր բանաստեղծականութեամբը դաշնաւորուած. այս վերջնոյն նման խոհալ ուսուցիչն է ան, ամենուս պաշտելի՝ իր չքնաղ ձիրքերով: Փափկախօս գրագէտն է ան, հայրենի, կրօնաբոյր քաղցրութեամբ մը օծուն: Ներքին չպիտի ըլլար զինքը վերցնել այն հմայքի լուսապակին մէջէն ուր կը սիրենք տեսնել միշտ ն. Սրբազնութիւնը, և ուր մնալ օգտակար պիտի ըլլար իրեն ալ, ազգին ալ:

Պէտք է Ռուսահայ արժանաւոր եկեղեցական մը ընտրել Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան:

ԳԱԽԱՆՆԵՐՈՒ ՎԻՃԱԿԸ

ՆԱԽԱՐԱՐԱՅ ԽՈՐՀՈՒՐԴԻՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Գաւառներու վիճակին վրայ Ազգ. Ժողովին յուզումնալից վիճարանութիւններէն ետքը, նոր և վրդովիչ լուրեր հասան այս չաթնուան մէջ: Մասնաւորապէս Բաղէշի առաջնորդ Տ. Սուրէն Ծ. Վ. Գալէմեան, որ իր երիտասարդի եռանդին կը միացնէ ժողովրդասէր հօր մը գործովը, նոր հեռագրով մը կը գուժէ թէ կացութիւնը խիստ մտահոգութիւն կը պատճառէ իրենց և թէ Ապտիւլ Րէզաք՝ հակասահմանադրականներու գլուխը անցած՝ լուրջ գործունէութեան մէջ է: Պուլանդէն ալ հեռագիր մը կը գուժէ զինեալ Քուրդերու Մօլլա Քէնան գիւղին մէջ գիշեր ատեն խանութ մը պաշարելը և Յարութիւն Աստիքեան անուն ազգայինը խժգոթէն սպաննել ու 300 ոսկիի չափ ապրանք և զրաֆ գողնալը: Տեղապահ Ս.ը Ներքին գործոց նախարարին զիմելով ներկայացուց այս հեռագիրը, ազդու կերպով բողոքելով կատարուած խժգոթութեանց դէմ, մանաւանդ չարագործներուն նկատմամբ կարուկ միջոց մը ի գործ չդրուելուն դէմ, որով մեծ յուսահատութիւն տիրած է ազգին մէջ: Նախարարը հաւաստեց թէ հե-

ռազմական հրամաններ ղրկուած են Բաղէշ՝ որպէս զի աւազակները նուաճեն և ցրուեն, և թէ ասոնց արդիւնքը մօտ օրէն կը լսուի: Տեղապահ Ս.ը պատերազմական պաշտօնատունն ալ գնաց և ի բացակայութեան նախարարին, խորհրդական Փուստ փաշայի պարզեց նոյն իրողութիւնները և կրկնեց նոյն բողոքները: Փուստ փաշա հաւատեց թէ Երզնկայի զինուորական հրամանատարութեան հրահանգ տրուած է երկու վաշա զինուոր ղրկելու Բաղէշ, ուր պիտի կրնան չարագործները ձեռք անցընել՝ և երկիրը խաղաղեցընել:

Նախարարաց Խորհուրդն ալ ի նկատ առաւ խնդիրը, և Վարչապետ Սահտ փաշայէն լսելով Հայ երեսփոխաններու դիմումը և տեղեկանալով անոնց մատուցած յիշատակագրին, հաւանութիւն յայտնեց Բաղէշ երկու վաշա զօրք ղրկուելուն: Ի նկատ առաւ և որոշեց Կայս. վաւերացման ներկայացնել Ներքին Գործոց Նախարարին խիստ կարեւոր և բանաւոր մէկ առաջարկը թէ այսուհետեւ ուսիկան-զինուորները Ներքին Գործոց Նախարարութեան ենթակուին, եւ զառաւաց կուսակալները կարենան անոնց հրամայել եւ պէսքին հաւանաւ գործածել, առանց որու կուսակալները ղրկուած ամէն ուժէ՝ բարոյական մարմիններ միայն կը դառնան: Խորհուրդին որոշմամբ Պատերազմական նախարարն ստանձնեց անմիջապէս հրահանգ տալ զինուորական հրամանատարներուն, որպէս զի ի հարկին օգնեն կուսակալներուն: Ազդու հրամաններ հեռագրուեցան Վան, Բաղէշ, Տիգրանակերտ, նոյնպէս և ուրիշ հայաբնակ գաւառներ, որպէս զի խստիւ հետապնդեն չեքեները, աւազակախումբերը եւն:

Յուսանք և մաղթենք որ այս հրահանգները գործնական արդիւնք մը ունենան այս անգամ:

* Նորակազմ Օսմ. խորհրդարանական Ազատութիւն և Համերաշխութիւն կուսակցութեան վերջին մէկ նիստին մէջ, հայ անդամ Տքղ. Տաղաւարեան էֆ. պահանջեց Հայաստան ևս ղրկել խորհրդարանական քննիչ մարմին մը: Այս առաջարկին ուժ

տուին թուրք անդամներէ ոմանք, բայց որոշումը մնաց յաջորդ նիստին:

* * Թուրք թերթեր խիստ սկսած են յորդոր կարգաւ Անատոլիոյ անապահով վիճակին վրայ ուշադրութիւն դարձնելու, թէ՛ ներքին և թէ՛ արտաքին քաղաքականութեան տեսակէտով չեղելով ամոր կտրելորութիւնը: «Բնականաբար՝ կառավարութիւնը տեղեկութիւն ունի Բօցասափ տեսակցութենէն, զոր չկրցաւ հաքկնալ Հազգը փաշայի դահլիճը», կ'ըսէ Թեքիսաք:

* * Հայ երեսփոխանները, որոնց մատուցած յիշատակագրով կը պահանջուէր ապահովել Արեւելեան նահանգներու մէջ հայ ժողովուրդին կեանքը, ինչքը և քաղաքացիական իրաւունքները, ի մօտոյ, Մեծ Եպարքոսութեան պիտի մատուցանեն Արեւելեան նահանգներու վերջին պատահարներու վիճակագիրն ալ: Հայ ծերակուտականներն ալ նախարարներուն մօտ անձնական դիմումներ կատարել սկսած են, ուժ տալու համար երեսփոխաններու առաջարկին:

* * Տեղապահ Ս.ը պատերազմական պաշտօնատուն գտնուած պահուն հաղորդուած է թէ Բաղէշի զինուորական հրամանատարը պիտի փոխուի և աւելի ազդեցիկ մէկը պիտի ղրկուի: Այդ որոշումը գործադրուած է յաջորդ օրը:

* * Սապահ կը ծանուցանէ թէ կառավարութիւնը Վանայ, Բաղէշի և Կարնոյ կուսակալութեանց համար 500 հոգիէ բաղկացեալ նոր խումբ մը պիտի կազմէ՝ բարեկարգութեան պահպանման համար. զինուորներն ալ պիտի գործակցին այս նպատակով:

* * Լուր կայ որ ներքին գործոց նախարար Ճէլալ պէյ յայտնած է Նախարարաց Խորհուրդին թէ իր առաջարկներն եթէ չընդունուին ինք հարկադրուած պիտի քաշուի իր պաշտօնէն: Նոյն յայտարարութիւնն ըրած է Վարչապետ Սահտ փաշա ևս:

ՍԱՆՍՍԱՐԵԱՆ Խնամակալութիւնը, կալուածական վարձքերու բարձրացմամբ տրամադրելի նիւթական միջոցները աւելցած ըլլալով, բարեյիշատակ հիմնադրին կտակին համաձայն ձեռնարկած է կարնոյ վարժարանէն անջատարար, վարժարան մ'եւ հաստատել, և հիմնել զայն Սերաստիոյ մէջ Կոնստանտնուպոլսէ մըն է, և չրջակայ թեմերովը հապէս կը կարօտի միջնակարգ ուսումնարանի մը:

Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԻԻՆԸ՛ Մչոյ, Սա- տունի և Սղերդի չրջանակի Միացեալ Ընկերութեանց վարժարաններուն համար մասնագէտ գիւղատնտես քննիչ մը նշանակելու որոշում տուած, և 15 սակի ամսական յատկացուցած է: Ուրախ ենք որ վերջապէս այս կերպով գոհացում կը ստուի շատ կարեւոր պէտքի մը:

ՄԻԱՅՆԱԼ Ընկերութեանց բաժանորդագրութիւններն աւելցնելու համար օժանդակ մասնախումբ մը կազմուած է, որ արդիւնաւորապէս սկսած է գործել: Գահաժառանգ իշխան Եւստուֆ Իզդետտին էֆ. բարեհաճած է իր հովանաւորութիւնը նուիրելու Միացեալի տարեկան պարահանդէսին:

Հ Ե Ր Ք Ո Ւ Մ Մ Ը

ՀՈՎՈՒՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

ՆԻՒ-ԵՈՐՔԻ

ՆԻՒ-ԵՈՐՔԻ, 23 Նոյեմբեր 1914

«Տոճար» շաբաթաթերթի թիւ 42ին մէջ կը կարդաւ սխալ լուր մը և կը խնդրեմ որ ուղղէք յաջորդ թիւերէն միոյն մէջ: Էջ 678 «Ամերիկա... Գաթթանեան վարդապետութեան ընծայացու ներկայացուցած էր...»

Եղեւութիւնը հետեւեալն է.—Գեր. Տ. Վահրամ Ս. Արքեպ. Մանկունի, Պատր. Տեղապահ, հարցում մը ուղղած էր Խնձ Դէորդ Նաղարեսնցի մասին, որ Բալթիֆորնիոյ մէջ կը գտնուէր, ըսելով թէ կը փափաքի այդ երիտասարդը Տաճկաստան գալով Դպրեվանք մտնել և քահանայանալ, հետեւաբար տեղեկութիւններ կ'ուղէր Բննելով և պէտք եղած խաղաղութիւնները կատարելով, տեղեկացոյ թէ այդ երիտասարդը միագուման է եղեր, և նոյնպէս ալ տեղեկագրեցի ի գիտութիւն Գերաշնորհ Տեղապահ Ս. Հօր Եւ վարդապետութեան ընծայացու չեմ ներկայացուցած և անձամբ

տեսած ալ չեմ այդ անձը: Ձեր այդ հրատարակութենէն իմ վրաս ալ տարբեր գաղափարներ կ'ընան կազմել ուրիշներ:

Յարգանք և ողջունել մնամ Աղօթակից
ՊՕՂՈՍ ՎՐԴ. ԴԱՅԹԱՆԵԱՆ

Ծ. ԽՄԲ.— Ահնարկուած տեղեկութիւնը հաղորդուած էր մեզ Պատկ. Կրօն. Ժողովոյ դիւանին կողմէ՝ ծանուցուած ձեւով: Բացայայտ է թէ պարզ թիւրիմացութիւն մըն է եղածը, զոր հաճոյքով կ'ուղղենք:

ԸՆՏՐՈՒԹԻՒՆ Կ. ՊՈԼՍՈՅ ՊԱՏՐԻԱՐԻՒՆ

Ազգային Ժողովը երէկ Մայր Եկեղեցւոյ մէջ հանդիսաւոր նիստ գումարելով, մեծ ոգեւորութեան մէջ կատարեց Թրքահայոց Պատրիարքի ընտրութիւնը: Ներկայ երեսփոխաններու թիւը 94 ի հասած էր քուէարկութեան ժամանակ, որուն արդիւնքն եղաւ.

Բուհ

ԱՄԵՆ. Տ. ՅՈՎՀ. ԱՐՔԵՊ. ԱՐՇԱՐՈՒՆԻ
(Ընտրելի Կեդրոնի Խմբակցութեան) 52

ԱՄԵՆ. Տ. ԵՂԻՇԷ ԱՐՔԵՊ. ԴՈՒՐԵԱՆ
(Ընտրելի Ազատական և Դաշնակցական
Կուսակցութեան) 37

Տ. ՅՈՎՍԷՓ ԵՊՍ. ՍԱՐԱՃԵԱՆ 1

Սպիտակ քուէ 4

Որով Ատենապետին կողմէ Թուրքիոյ Պատրիարք հռչակուեցաւ **ԱՄԵՆ. Տ. ՅՈՎՀԱՆՆԷՍ Ս. ԱՐՔԵՊ. ԱՐՇԱՐՈՒՆԻ**:

Ժողովը չնորհակալութիւն յայտնեց Տեղապահ Տ. Վահրամ Ս. Արքեպ. Մանկունիի, ազգ. շահերը պաշտպանելու համար իր տարած ջանքերուն առթիւ:

Ի վերջոյ Մայր Դիւանէն և Եկեղեցւոյ և աշխհ. երեսփոխաններէ կազմեալ պատգամաւորութիւն մը Սկիւտար գնաց նորոնաիր Ս. Պատրիարք հօր ծանուցանելու իր ընտրութիւնը:

Արտօմատեր

ՀՄԱՅԵԱՎ ՔԶՆՅ. ԷՔՍԷՐՃԵԱՆ

ՏՅՈՐԷՆ-ԽԱՐԱՊԻՐ

ՋԱՐՄԱՍԵՐ ԲԶՆԵՐ. ՆԷՋԻՒՐԵԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Օ. ԱՐՁՈՒՄԱՆ

ՕՍՄ. ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

سُكْرَتِ تِجَارِيَّةٍ عَثمَانِيَّةٍ

SOCIÉTÉ COMMERCIALE OTTOMANE

ԱՆԱՆՈՒՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԴՐԱՄԱԳԼՈՒԽ 100,000 ՕՍՄ. ՈՍԿԻ

Կեդրոնացեղի՝ Կ. ՊՈԼԻՍ

Ա.Ռ.Ա.ՋԻՆ ՀԱՅ ԴՐԱՄԱՏՈՒՆ

ԴՐԱՍԵՆԵՍԿԵՐԸ ԱՌԺԱՄԵԱՅ ԿԵՐՊՈՎ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ ԵՆ

ՍԹԱՄՊՈՒՆ, ԳԱԹԸՐՃԸՐՈՎԱՆ ԽԱՆ

Հայկական սոցիալական հաստատությունները կ'ընեն փոխառություններ՝ առևտրական տոմսերու, մուրհակներու, փոխանակագրիներու, բաժնեթուղթերու, պարտաթուղթերու, ապրանքներու և բեռնագրիներու վրայ:

Կուտայ չէքեր, վարկագրիներ, փոխանակագրիներ և հեռագրական վճարումի հրամաններ՝ ինչպէս թուրքիայ, նոյնպէս աշխարհիս բոլոր խաւերուն վրայ:

Կը զենէ և կը ծախէ ամեն տեսակ բաժնեթուղթեր և պարտաթուղթեր, թէ՛ մեր և թէ՛ բոլոր օտար հրապարակներուն վրայ, ինչպէս և օտար դրամներ:

Կը գանձէ և կը գնդէ առևտրական տոմսեր, մուրհակներ, փոխանակագրիներ, բաժնեթուղթեր և կտրոններ:

Կ'ընդունի զրամական ասանդներ նպատաւոր պայմաններով:

Դրամատունս հաստատած է Առեւտր. սեղեկութիւններու համար լուսադոյն կերպով կազմակերպուած սպասարկութիւն մը:

ԽՆԱՅՈՂԱԿԱՆ ՄՆՏՈՒԿ

Խնայողութիւնը մեր համայնքին մեջ փայտեղէն համար կ'ընդունի ֆանդիինգ (25) դրոշէն սկսելով գումարներ

Դրամատունս կը կատարէ նաեւ, թէ՛ իր հաշուոյն, թէ՛ մասնակցութեամբ և թէ՛ ուրիշներու հաշուոյն ամէն տեսակ արդիւնաբերութիւններու և ապրանքներու գնում, վաճառում, փոխանակութիւն, ներածում և արտածում:

Կ'ընդունի ներկայացուցչութիւն թէ՛ տեղական և թէ՛ օտար առւերներ:

Կը կազմէ առևտրական և ճարտարարուեստական ընկերութիւններ և կը մասնակցի անոնց: Կ'ընէ հանրօգուտ շինութեանց վերաբերեալ ամէն տեսակ ձեռնարկութիւններ:

ՍՏԱՑՈՒԱԾ ԳԻՐՔԵՐ

ՀԱՅ ՅԵՂԸ, Ազգային տեղագրությունը. — Գրեց Տ/թ. Մ. Սմբատ Գաբրիելյան, Նիւ-Եորք, 1911: Ամէն անոնք որ Հայոս ազգայն փայլուն կեանքին ջերմ իղձովը կը տոչորին, անոնք որ կը փնտռեն անկեղծօրէն ճշմարիտ յառաջդիմութեան ճամբան, թո՛ղ կարդան այս հատորը, լամփոխում մը հեղինակին զանազան առիթներով արտասանած ցնցող բանախօսութեանց, տեսակ մը շարունակութիւն հայկական նգնաժառանգին, ուր արտապնդող խօսքերով կը ցուցուին ազգի մը յառաջդիմութեան սրբաբանները, ճշմարտութեան և արդարութեան ճամբան: Գին թղթակազմ 50 սէնդ, լաթակազմ 75 սէնդ:

ԿԱՂԱՆԻԸ. — Փրցուած էջեր կեանքի հատորէն. գրեց Թեոդիկ. — Սրտայոյց նորավէպեր, օրաթերթերու մէջ ցրուած, նաեւ անտիպ յուզիչ հատուածներ զորս թէոդիկ միայն գիտէ գրել, ուշագրաւ է մասնաւորապէս կազանդի վրայ հմուտ ուսումնասիրութիւն մը: Գին ներկայ Ա. հատորին 6 զրշ.: 0. Արդուման ճաշակաւոր տպագրութեամբ յանձնարարելի հատոր մը:

ՔՈՒՐԱՆ, հանդերձ Մուհամմէտի կենսագրութեամբ: Սալարիի և Քաղխնրաքիի Փրանս. թարգմանութիւններէն հայերէնի վերածեց ԼԵՒՈՆ ԼԱՐԵՆՑ, նպատակ ունենալով Հայ ազգին առիթ ընծայել որ մօտէն և լիովին ծանօթանայ իր կեանքին և ճակատագրին վրայ այնքան տիրական ազդեցութիւն ունեցող այս օրինաւորքին, և բացատրել իսլամ ազգերու կենցաղն ու հոգեբանութիւնը: Ամբողջ գործին բաժանորդագին 15 զրշ. արտասահման 4 ֆր.: Հրատարակուած առաջին հատորին գինն է 4 զրշ. կամ 1 ֆրանք: Կեդրոնատեղի Աստուրեան տպարան Պապը Ալի Ճատէսի:

ՍՐՏԻ ՀԻՒԱՆՔԴՈՒԹԻՒՆ և ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹԻՒՆ. — Քսանեհինգամեայ ենթակայի մը անձնական փորձառութիւնէն նկարագրութիւններ: Գրեց Կդելիս Մ. Տասըրեան: Հետաքրքրաշարժ և շահեկան տեսութիւններ և դարմաններ այդ ցաւալի ախտին վրայ՝ փորձառուի մը կողմէ որ լաւագոյն բժիշկն է ամէն ցաւին, գին 7 1/2 զրշ. հասցէ՝ հեղինակին քով, Չուհաճի խան թիւ 22:

Գ Ի Ն 1 ՂՐՈՒՇ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ծ. ԱՐՁՈՒԹԱՆ

Զախախնայ, Յակոբեան Խան

Կ. ՊՈԼԻՍ